

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Թիֆլիսի առևտրական գազեր:

Հրատարակում է շաբաթը մեկ անգամ կես թերթ, կիրակի օրերով: 10 տմախյ զինը Մարտից մինչև Յունիսը քաղաքում 2 ման. 50 կոպ., դուրսը 3 մանեթ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ
(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գաղեթին ստորագրվել կարելի է խմբագրչի մօտ:
Գաղեթում հրատարակվելու կրնողովին մասնատու յոյտարարութիւններ: Գների մասին կարելի է խմանալ խմբագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Տէրութենի կարգադրութիւնները: Տորդերը Անդրկայի առուտորի ձեւը: Ահաաարակ դրականութենի նշանակութիւնը, և մեր դրականութիւնը 1865 թիւին «Գարունի» 2-դ նումերը: Զանազան տեղեկութիւններ: Առևտրական տեղեկութիւններ:

ՏՈՐԳԵՐ:

Ճանապարհների կառավարութենի 8-դ Օկրուգումը էս մայիսի 30-ին նշանակած է վոեննո-Գրուզինսկի ճանապարհի վրայ բանող եզների համար 11,340 փութ խտ հասցնելու տորգը:

Թիֆլիսի գաւառական կառավարութենումը Յունիսի 19-ին նշանակած է Զաքարիա օկրուգումը դանդաճ Ալմալինսկի փոշտի ստանցիի համար տուն շինելու տորգը: Էս դործի համար նշանակած է 5,443 մ. 70³/₄ կ:

Կովկասի Պրիկազումը Յունիսի 3-ին նշանակած է Նադվերչի Սովետնիկ Գրիգոր Խզմիրեանցի երկու տան ծախելու տորգը: Մէկ տունը, որն որ երկու յարկաւոր (էտա-ժանի) է, գտնվում է քաղաքի 1 մասումը և 1 կվարտալումը: Սրա պարտքն է 1858 թիւին վեր առած—22,000 մ: Միւս տունը, որն որ երեք յարկաւոր է, գտնվում է Սիրաչխանումը: Սրա պարտքն է 1859 թիւին վեր առած 12,000 մ: Երկու տան տակն էլ դուքաններ կայ:

Թիֆլիսի շրջակայ տեղերի շինութենի ու կարգի գցելու համար տարգած Կովկասումը Յունիսի 24-ին և 25-ին նշանակած է Հաւաբարի մօտ գտնված 8 կտոր հողի ծախելու տորգը: Ամեն մէկ կտոր հողը 80—100 և 200 քառակուսի սաճեն է: Առնողը պէտք է էդ հողերի վրայ շինութիւն անէ անպատճառ երեք տարվայ մէջը:

Թիֆլիսի առևտրական գաւառանը (Կովկասի Սուդը) 1865 թիւի Նոյեմբերի 3-ին

Թիֆլիսի քաղաքացի Գէորգ Զալինեանցին անդգայ կուար է դուրս բերել:

ԹԻՖԼԻՍ

Մայիսի 14—1866.

Առուտորի ազատութենի գաղափաւը ծնվեցաւ Անդրկայումը և էս տեղից իբրև մէկ ցաւ անց կացաւ և մնացած Եւրոպան: Անդրկայի քաղաքական տնտեսները առաջին խօսողներն էլան մերկանտիլեան ուսումի վրայ: «Մահ մերկանտիլեաներին, ոսկի սիրողներին» դուռում էին էդ տնտեսները, իրանք մի և նոյն ժամանակը ոսկու առաջը երկրպագութիւն տալով: Անդրկան մէկ էնայիսի ազատ առուտորի երկիր է, որ ամեն տեղ պատերազմում է մերկանտիլեան սխտեմայի դէմ, բայց մի և նոյն ժամանակը ինքը ուղարկում է աշխարհի ամեն ծէրերը հաղաբաւոր նաւեր ու մարդիկ ոսկի պտուկու ու բերելու: Էդպէսով ահա Անդրկան կարողացաւ ժողովել զարմանալի հարստութիւններ, ծաղիկեցնել իր ֆաբրիկաների առուտուրը և աշխարհի վրայ ամեն տեղ առուտորի տէր դառնալ: Գուրս է դալիս, որ Անդրկան իր քարոզած ազատ առուտուրով մի և նոյն նպատակն ունէ առաջը, ինչ որ մերկանտիլեան ուսումը:

Մերկանտիլեան ուսումի նպատակն է, որ ինչքան կարելի է չատ ոսկի ժողովել և էս զէնքով նուաճել ամեն տեղ աշխատանքը, իշխող լինել տնտեսական առուտորի մէջ և ժողովուրդների վիճակը տակ ու վերս անել: Կարճ ասենք մերկանտիլեան սխտեմայի նըպատակն է փողի թաղաւորութիւնը, դրամադլիս իշխանութիւնը և մշակ մարդկանց դէմ դաւաճանութիւնը: Ժողովել ոսկին, ապրանքները առնել քանի կարելի է աժան և ծախել քանի կարելի է թանկ, ահա մերկանտիլեան ուսումը:

Կանտիլեան ուսումի և մանաւանդ նոյն իսկ Անդրկայացոց նպատակը: Էդ բանի համար ահա մեր լուսաւորւած դարումը Անդրկայիքն իրանց առուտորի ձեւին «ազատ առուտուր» են ասում:

Անդրկան գիտէ, որ ազատ առուտուրը ամենալաւ հնարքն է դրա համար թէ ծովի և թէ ցամաքի վրայ իշխելու: Անդրկան գիտէ, որ ոչ մէկ երկիր չի կարող հետը հաւատարմիլ ոչ փողով, ոչ նաւերի շատութեամբ և ոչ ֆաբրիկաների ապրանքներով: Ամեն տեղ էլ Անդրկան առուտորի տէր է: Գրան մնում է միայն քնացնել ազգերին և սովորել դրսի առուտորի ազատութիւնը ճանաչել տալու, իբրև լուսաւորութենի միմիայն հնարք: Էդ ազատ առուտորի ուսումի տարածելու պարտաւորութիւնը յանձն առան յետադէմ քաղաքական տնտեսները և ամեն Անդրկասէրները: Իսկ Անդրկայիքն իրանք էդ միջոցին հասան իրանց նպատակին Հընդկաստանումը, Պարսկաստանումը, Տաճկանումումը, Չինաստանումը: Էս տեղերումը արդէն ծաղկած է առուտուրը: Մնում է հիմի տարածել էդ ուսումը Խաղափայտումը, Խաղափայտումը և առ հասարակ մնացած Եւրոպայումը: Եւ ահա էս խօսքերովն եւ դառնում դէպի մեզ տնտեսները և Անդրկայիքը:

Գուրք ազատ առուտուր չունեցող ազգեր ազգեր: Բաւական է 19-դ դարումը Էդպէս ապրել: Շուտով ընդունեցէք դրսի առուտորի ազատութիւնը ձեր երկրներումը, կողարեցէք ձեր անօգուտ ֆաբրիկաները, քաղցած թողէք հաղաբաւոր մշակներին, չտարկեցէք Անդրկայացոց աժան ապրանքներն առնելու, դուք միայն բնական բերքեր ժողովեցէք ու տվէք ձեր բոլոր ոսկին Անդրկայացոց: Ի՞նչ հարկաւոր է էդ դարչելի մեռալը արդէն ազգերին: Ոսկին հարկաւոր է Անդրկայացոց վաճառականներին և փողատէրներին,

որոնք զիտեն զիրա գործածելը, զիտեն լաւ չահեցնելը, առնելը, ծախելը և այլն: Ի՞նչ հարկաւոր է ձեզ ոսկին, երբ որ չէք զիտի դրանից օրինաւոր օգուտ քաղելը: Տվէ՛ք Անգլիացւոյ, նրանք կտուրցնեն ձեզ, թէ ինչպէս պէտքէ վարվի մամոնայի հետ: Երբ որ ձեր բոլոր փողը կերթայ Անգլիացւոյ մօտ ու երբ որ դուք էլ փող չէք ունենալ ձեզ կառավարելու համար—ուրեմն երբ որ կհասկանաք փողի արժանաւորութիւնը—էն ժամանակը դարձէ՛ք զէպի Անգլիացիքը ձեր խոնարհարար խնդրով: միամիտ կացէ՛ք, որ Անգլիացիքն էն ժամանակը փոխ կտան ձեզ էնքան ոսկի, ինչքան էլ կարելի է հաւատալ ձեզ: Գուր ինքներդ զիտեք, որ ոչ մէկ զիտութիւն հեշտ ձեռք բերելու չէ: Ուրեմն կեցցէ՛ Անգլիան և ազատ առուտուրը:»

Էդպիսի ճառեր կարդալուց յետոյ նրանք էլի ուզում են մեզ համոզել, որ ազատ առուտուրը չէ թէ ազգերի համար քանդակելու: միայնակ ճանապարհն է, այլ բաղդաւորութենի միջոց: Ինչէ՛ր. չէ անում էս բոլորիս Անգլիան: Իբրեւ մէկ վիշապ նա խեղդում է ողջ աշխարհը և իբրեւ արնով չկշտացող վաղը ծծում է դա իրա քանդած ու կոտորալից ազգերի արիւնը, այս ինքն իրանդացւոյ, Հնդկացւոյ, Չինացւոյ, Ցաճկացւոյ և ուրիշ շատ ազգերինը:

Ա. Ե.

ԱՌՀԱՍԱՐԱԿ ԳՐԱԿԱՆՈԹԵՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
1865 թիւն:

1

Մեր դարը քննութենի դար է: Մարդկութիւնը մինչև էսօր էնքան տեղը անօգուտ է անցկացրել իր օրերը, էնքան դժուար է թողել մեզ շինելու և էնպէսի նեղ դրութենի մէջ ծնել այժման սերունդին, որ մենք ստիպւած ենք քննողական աչքով մտիկ տալ ինչպէս մեր նախահայրերի գործերի վրայ, նրամանապէս և էն իրողութիւնների վրայ, որոնք պատահում են մեր օրերումը և մեր աչքի առաջը: Մեր պապերի պարսպ անց կացրած կեանքը լաւ խրատ է մեզ համար, որ մենք ամեն գործ, ինչ որ գործելու ենք, ամեն բան, ինչ որ թէ ասելու ենք և ինչ որ լսելու ենք առաջ քննենք և յետոյ գործենք, ասենք, ու հաւատանք: Այնչէս բան այժման մարդկութիւնը կուրօրէն չէ կամենում հաւատալ: Այժմէկ գործ և միտք առանց քննութենի չունէ էհալիւր մեր աչքումը: Մեր ամեն քայլը, ամեն մէկ մտածութիւնը պէտք է լինի քննութիւն: Թէ ի՞նչ է էդ քննութենի

նպատակը ահա տեսնենք: Մարդկութիւնը եօթը հազար տարի ապրելով աշխարհիս վրայ չէ հասկացել մինչև էսօր կեանքի նշանակութիւնը, չէ սովորել գործածել կեանքի մեքենան և իր կարծեցած երջանկութենի փոխանակ աւելի վատթար թշուառութենին է հասել: Մեր պապերը կերել են, ինչ որ ձեռներն է ընկել ուտելու, խմել են ինչ և ինչքան կարելի էր խմել և էդ բաներից յետոյ ստամոքսի մարսողութենի ժամանակը երազներն են էլել տեսնում և իրանց երեւակացութիւնը էնքան տեղը զրգուել են, որ իրանց օրական ապրուստի կամ իրանց վիճակը ապահովացնելու վրայ մտածելու և մի և նոյն ժամանակը գործելու փոխանակ, մտածել են էն բաները, որից ոչինչ մէկ նիւթաւոր օգուտ չէ էլել ոչ իրանցը և ոչ իրանց յետագայ սերունդին, ինչպէս ժողովրդի մէջն ասում են «ոչ հոգու է էլել և ոչ մարմնու»: Մեր պապերի էդպիսի պարսպ անց կացրած օրերը, նրանց երեւակացութենի տեղծած երազները, նրանց կոչաւ ու կոպիւր յարաբերութիւնները միմեանց հետ, նրանց էդ բոլոր կարգ ու կանոնները այժման սերունդին հասցրին էս մեր օրերումը էն նեղ դրութենին, որ համբերութիւններս հատած ակամայ կամօք ամենքս ստիպւած ենք մտածել այժման մարդկանց ընտանեկան վիճակի վրայ, քննել և վերանորոգել էն բոլոր հին կարգ ու կանոնները, որոնք մեր պապերին բաց ի երազները ոչինչ չեն տվել և մեզ բաց ի անկարգութիւնը և թշուառութիւնը ոչինչ ժառանգութիւն չեն թողել: Թէ որոնք են էդ վերանորոգութենի արժանի անկարգութիւնները, մենք կարծում ենք ամեն փոքր ի շատէ մտածողը և լուսաւորվածը չէ թէ միայն ուրիշներից լսելով զիտէ, այլ թէ հէնց ինքն էլ կրել է էդ նեղութենի հարուածները և արդէն խառնվել է էն կարգի մարդկանց հետ, որոնք, համբերութիւնները հատած, արդէն էս տեղ ու էն տեղ իրանց ձեռք գործ են դրում ազատվիլ էդ հին կարգ ու կանոնի բռնաւորութենից, ջարդել ու ոչնչացնել էն ամեն բան, ինչ որ մինչև էսօր բաց ի վնասը ոչինչ օգուտ չէ բերել մարդկութենին, և որի վրայ ոչինչ բարոյական շինութիւն վերականգնել կարելի չէ:

Վախենալով որ մեր ընթերցողները չկարծեն, թէ մենք որ և իյէ հասարակական կառավարչութիւնների մասին ենք ասում և խօսում էդ վերանորոգութիւնների վրայ, մենք էս տեղ ցանկանում ենք պարզել մեր վերեւ ասածները և էն պարզների համար, որոնք միշտ սովոր են վերանորոգութիւնը և կարգ

ու կանոն ասած բաները հասարակական կառավարչութիւնների հետ անբաժան լսելու հասկանալ: Մենք ահա մեր կարծիքը ամեն կերպ հասարակական կառավարչութիւնների մասին էս տեղ ձեր առաջը թողլով անց կացնելով խոնարհարար խնդրում ենք մեր թէ այժման դրութիւնը և թէ այսուհետեւ ասելիքները հասկանալ առանց որ և իյէ հասարակական վարչութիւնների:

Մենք և մեզ հետ միասին շատ շատերը էս կարծիքի ենք, որ ոչինչ գործ չունի՛ք ոչ մէկ հասարակական կառավարչութենի հետ. որովհետեւ բոլոր հասարակական բարեկարգութիւնները անօգուտ են, թէ ժողովրդի մէջը չկայ ներքին կամ աւելի պարզ ասել ընտանեկան, զերգաստանակած բարեկարգութիւն: Հասարակական կառավարչութիւնը զերգաստանական կառավարչութենի միայն արտաքին ձեւն է: Այժմէկ հասարակութիւն կարող չէ ոչ մէկ իր անդամին բաղդաւորացնել, եթէ ինքը անդամը չաշխատէ իրա բարօրութենի համար: Հասարակութենի հետ մենք ոչինչ գործ չունինք և նրա վրայ էլ ոչինչ խօսելու: էս թող աչքի առանջն ունենան մեր կարդացողները: Էդպէս ահա մեր բոլոր ասածը միշտ վերաբերվում է մեր ընտանեկան կեանքին:

Մեր ընտանեկան կեանքումը արժանի են ուշադրութենին, քննութենին և վերանորոգութենին ծնողների յարաբերութիւնը զէպի զերգաստանի միւս անդամները. կոչը զէպի իր ամուսինը և կանանցը զէպի արական սեռը. երեխաների դաստիարակութենի ձեւերը, նրանց տված օգուտը, հետեւանքները և այլն: Մեր հասարակական կեանքի մէջը ամբողջ զերգաստանների և առանձին առանձին անհատների միմեանց հետ ունեցած յարաբերութիւնները, հարուածները և ազդեցութիւնը, նախապաշարմունքները և անստիպողաւորութիւնները, սովորութիւնները և ծէսերը ու դրանց հետեւանքները: Վերջապէս ինչքան տեղը մենք ճշմարիտ կերպով ենք հասկանում կեանքի նշանակութիւնը, ուղիւ են արդեօք մեր ցանկութիւնները, ինչպէս ենք բաւականութիւն տալիս մեր կրքերին ու ցանկութիւններին, կարճ ասենք թէ ինչքան տեղը մենք լաւ ենք ապրում և կամ զիտենք ապրել:

Ինչպէս տեսնում եք խնդիրներ շատ շատ կան, որոնց վրայ մարդկութիւնը մաշվում է և մաշվել է և որի ծուռն ու սխալ վճիռներից է, որ այժման սերունդը ծնվել է էսպիսի հանգամանքների մէջ: Այժման սերունդը ասացինք համբերութենից դուրս եկած

Հայաստանիս զաղեթը տակիս քանի քանի անգամ խօսել է մեր ժողովրդի մտտիս պաշտօնների վրայ—հաշիւ չունէ։ Այն մասնակ է իր դրամները 1858-դ թվից մինչև 1863 թիւը, թո՛ղ բաց անէ նուամերները և մէկ մէկ կարգաց։ Թէ հիմի ինչի է դա եղ-պէս խօսում և էն ժամանակն ինչի էնպէս, էդորն էլ մէկ պատճառ կլինի—առանց պատճառի աշխարհումս ոչինչ չէ անվում։ Եթէ չունի նա «Մեղու Հայաստանի» նու-մերները, վեր առնէ Գարունի 2-դ նուամը և կարգաց «Ստորագրութիւն թիֆլիզցի» ա-նունով յորուածը։ Էդ նուամերի 95 երեսին տպած է, թէ «Խարիւղ գիւղի անունը էս մեկնութիւնն ունէ։ Պատում ևն թէ, եթէ մէկը խարիւղն էր ընկնում, առնում էր մէկ պատիկ նոր կաւէ փարչ, մէկ ջուխտ իս-տակ մամ, բլիթներ և տիկին, տանում էր քարափի զուկը, վառում էր մամը և միւս բաները թողնում էր այն տեղ, այժմ ևս այդ մտտիպաշտութիւնը կայ դեռիկ մարդկանց մէջ։» Մնտիպաշտութիւն չէ էդ բանը։

Մնտիպաշտութիւն չէ նմանապէս հա-ղարար բաներ, որ անում է մեր ժողովուր-դը և ինքը տէր հայրն էլ լաւ գիտէ։

Երկուշաբթի օրով մեր վաճառականը փող չէ տալիս ոչովին։

Գրքայնները, թուղթ բաց անողները, դարի դպանները, թուրքի մուլերը, ջաղաքարները քանի մուշտարի ունին մեր ժողովրդիցը։

Մէկ տեսակ մարդկանց առաւօտը սրա-տաճելիս մեր ժողովուրդը չէ ասում, թէ էն օրը ձախ պէտք է գնայ նրա գործը։

Նրանքի բարի և չար կատարվելը, աջ և ձախ ձեռի քոր դալը, աչքի խաղալը—չէ իմացել տէր հայրը։

Յետոյ էս բաները գիտենալով, ինչի է տէր հայրը էս տեսակ զղուկի մտտիպաշտու-թիւնը խառնում մեշ ժողովրդի ջերմեռան-դութենի և կրօնասիրութենի հետ։ Անկա-րելի է, ուրիշ կերպով չի կարելի էս բանը մեկնել, որ տէր հայրը էս բառերն ասելիս մէկ ուրիշ երեւելի նպատակ է ունեցել։ Ուրիշ բան է նրա քարոզածը։ Հասկացողը՝ կհաս-կանայ։

նորհած պարզեւր մեր հայտնի-պումին։ Մի և նոյն զաղեթի մի և նոյն նու-մերումը դրում են, որ Աստուծանի և Հրեղ-կաստանի հայոց Մովսէս Աբբ-եպիսկոպոսը էս տարի Մարտի 10-ին Պարսից Նարա-դին շահիցը ստացաւ «առիւծի և արեղակի» երկրորդ կարգի նշանը, աստղով և կարմիր ու կանաչ ժաշաւինով (լենտով) զարդարած։ Որովհետեւ Պարսկաստանումը էս նշանը տը-վում է միայն զօրապետներին և շատ բար-ձր մարդկանց, որոնք իրաւունք ունին իրանց մօտ երկու արդաշի զինուոր, այս ինքն զաղախ պահելու էդ պատճառով էլ հիմի մեր Մով-սէս Աբբ-եպիսկոպոսն էլ միշտ երկու սարսից զինուորական սպասաւոր ունէ իր դռանը։

Թիֆլիսի վիճակից Պաթմոդի-կոս ընտրելու մէկ պատգամաւոր ընտրող երեսփոխների ցուցակը։

«Մեղու Հայաստանի» 16-դ №-ից երե-ւում է, որ Թիֆլիսի 21 եկեղեցուց էս հետե-ւաւ մարդիքն էն ընտրած երեսփոխ մէկ պատգամաւոր ջոկելու համար։

Աստիճանաւորներ և աջնիւներ՝

- 1.) Ե. Արծրունի, 2.) Ս. Ղամբարեանց,
- 3.) Զ. Ավթանդիկեանց, 4.) Յ. Ղալթմազեանց,
- 5.) Թ. Խոջամիստեանց, 6.) Ս. Շահյինա-րեանց, 7.) Ա. Լրկայնաբաղուկ—Արդու-թեանց, 8.) Գ. Լիսիցեանց, 9.) Գ. Մելի-քեանց, 10.) Ս. Ամիրեանց, 11.) Մ. Տէր-Գրի-գորեանց, 12.) Ս. Վարձեկեանց, 13.) Ա. Արա-րատեանց, 14.) Յ. Շահադիգեանց, 15.) Ս. Բատտամեանց, 16.) Պ. Մելիք—Բեղլարեանց,
- 17.) Բ. Վարդանեանց, 18.) Ա. Ղորղանեանց,
- 19.) Ա. Թալիբեանց, 20.) Յ. Մելիք—Սարգ-սեանց, 21.) Ա. Բէհրութեանց, 22.) Բ. Փի-րադեանց, 23.) Մ. Երկայնաբաղուկ—Արդու-թեանց, 24.) Ա. Երզնկեանց, 25.) Մ. Բէհ-րութեանց, 26.) Մ. Առաքելեանց, 27.) Մ. Տէր—Շմաւօնեանց, 28.) Ս. Տէր—Մխիթար-եանց, 29.) Ն. Թումանեանց, 30.) Գ. Տէր-Ստեփանեանց, 31.) Յ. Կարենեանց, 32.) Յ. Գուրգլինբեկեանց, 33.) Յ. Աղաբարեանց, 34.) Հ. Հէջուբեանց, 35.) Գ. Բաթրէուբեանց, 36.) Զ. Թումանեանց, 37.) Գ. Հէջուբեանց և 38.) Զ. Ղորղանեանց։

Բաղաքայնք՝

- 1.) Ս. Արիստրոմեանց, 2.) Գ. Թամա-րեանց, 3.) Ա. Փողկինեանց, 4.) Բ. Խոսրո-վեանց, 5.) Կ. Եղիազարեանց, 6.) Մ. Մելի-մանեանց, 7.) Ռ. Սմիտեանց, 8.) Յ. Քու-լեանց, 9.) Գ. Մովսէսեանց, 10.) Յ. Բա-ղաբարեանց, 11.) Ս. Վարդանեանց, 12.) Ա.

- Պապուկեանց, 13.) Գ. Մեղրումեանց, 14.) Ա. Ծատուրեանց, 15.) Ս. Հախնազարեանց, 16.) Ա. Խշխանեանց, 17.) Ա. Հախկերեանց, 18. Ս. Ղամադեանց, 19.) Գ. Գարգիլեանց, 20.) Խ. Մակարիանց և 21.) Ս. Էգանեանց։

ԱՌԵԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ։
Լճոյն Ապրիլի 28.

Անգլիայի բանկը բարձրացրուց իր դիս-կոնտը* մինչև 80%։
Օդեսա Ապրիլի 26.

Վերսլի կուրսը Մարսելի վրայ երեք ամսով . . . — 285 սանտիմ։

Պարիսի վրայ . . . 275 սանտիմ։
Պետերբուրգ Ապրիլի 28.

Կուրսը Լոնդոնի վրայ երեք ամսով 27 պէնս։

Պարիսի վրայ . . . 275 սանտիմ։
50% Լատարեյով առաջին փոխառու-թիւնի տոմսակները . . . 108 1/4 ման.

50% Լատարեյով երկրորդ փոխառու-թիւնի տոմսակները . . . 105 1/4 ման։
Ոսկին . . . 7 մ. 27 կ.

Թիֆլիս 1866 Մայիսի 14.
Բամբակի առուտուր չկայ։ Ոչով չէ կա-մնում առնել 8 մ. 50 կոպեկով։

Բուրդը . . . —
Լեղակը . . . —
Ինգլիզու շաքարը . . . 10 մ.
Ոսկին . . . — 11 մ.
Արծաթը 72 պրոբի . . . 73 մ.
— — 84 պրոբի . . . 320 մ.
Ոսկին . . . 7 մ. 20 կ.

* Ժամանակիցը առաջ վերսիլ թափելը շահը դուրս դալով, ասվում է զիսկնաւ կամ զիսկնաւո։ Բանկերը առնում են մասնաւոր մարդկանց վերսիլները, որոնց ժամանակը դեռ չէ հասել շահը դուրս դալով։